Կրթություն

ԱՆՑՈՒԴԱՐՁ

14.03. 2012թ.

Ճանաչի՛ր

# Կրթությունն ու կրթաթոշակները Հայաստանի ամերիկյան համալսարանում

Հայաստանի ամերիկյան համալսարանը հիմնադրվել է 1991թ. սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայկական ընդհանուր բարեգործական միության եւ Կալիֆորնիայի համալսարանի նախաձեռնությամբ, միջոցներով ու ջանքերով: Հիմնադրման առաջին իսկ օրվանից համալսարանն իր առջեւ խնդիր է դրել ամերիկյան մոդելի լավագույն կրթությունն հասանելի դարձնել մեր երկրում: Համալսարանն հավատարմագրված է ԱՄՆ դպրոցների եւ քոլեջների արեւմտյան ասոցիացիայի կողմից եւ հանդիսանում է ԱՄՆ Կալիֆորնիայի համալսարանի գործակիցը:

Այս չափանիշներին համարժեք կրթական որակ ապահովելը, բնականաբար, էժան չի տրվում: Ընդհանուր առմամբ կարող ենք արձանագրել, որ ծախսային մասով մենք էապես չենք տարբերվում Միացյալ Նահանգներում գործող բուհերից, քանի որ դասախոսական եւ ադմինիստրատիվ կառույցների ղեկավար օղակներում ներգրավված են միջազգային որակի մասնագետներ եւ նրանց ներկայությունը Հայաստանում ապահովելը զգալի ծախսեր է ենթադրում: Այսօր մեր համալսարանում օտարերկրյա քաղաքացու համար ուսման վարձը 3.3մլն ՀՀ դրամ է: Սա մոտավորապես այն գումարն է, որ համալսարանը ծախսում է մեկ ուսանողի գծով նման որակի կրթություն ապահովելու համար: Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, ինչպես նաեւ Հայաստանում երկարաժամկետ կեցության կարգավիճակ ունեցողների համար ուսման վարձը ընդամենը 960,000 ՀՀ դրամ է: Այսինքն՝ համալսարանը սուբսիդավորում է ավելի քան 2.3մլն դրամ մեկ ուսանողի համար:

Նման հնարավորություն ուսանողներին տրվում է՝ շնորհիվ համալսարանի հիմնադիրների, բարերարների եւ գործընկերների: Հայաստանի հանրապետության կառավարությունը, որպես համալսարանի հիմնադիր, անհատույց օգտագործման է տրամադրել Բաղրամյան 40 հասցեում գտնվող համալսարանի հիմնական շենքը: Միացյալ Նահանգների պետական դեպարտամենտի հատկացումների հաշվին ԱՄՆ-ում ձեւավորվել է դրամագլուխ, որի տարեկան եկամուտներն անհատույց հատկացվում են համալսարանին սուբսիդավորված կրթություն տրամադրելու համար: Հայկական ընդհանուր բարեգործական միությանը նույն նպատակի համար նույնպես ձեւավորել է դրամագլուխ: Համալսարանի գործունեությունը անհնարին կլիներ առանց առատաձեռն հովանավորների ու նրանց շարունակական նվիրատվությունների: Այս նպատակին են ծառայում նաեւ համալսարանի գործունեությանը աջակցող ձեռնարկատիրական գործունեությունից ստացված այլ եկամուտները: Հաշվի առնելով մեր երկրի սոցիալ-տնտեսական ներկայիս իրավիճակը եւ գիտակցելով, որ նույնիսկ 960,000 ՀՀ դրամ տարեկան վարձը շատերի համար կարող է ուսման հասանելությունը սահմանափակող գործոն հանդիսանալ, մենք պարտավորություն ենք ստանձնել, որով բացառում ենք համալսարան ընդունված որեւէ շնորհալի երիտասարդի ուսման ընդհատումը ֆինանսական նկատառումներից ելնելով: Սա մեր որդեգրած քաղաքականությունն է, որն իրականացնում ենք երեք ուղղություններով:

Առաջինը անվանական կրթաթոշակներն են՝ նախատեսված բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների համար: Այս կրթաթոշակները տրամադրվում են թե՛ պետպատվերի տեսքով, եւ թե՛ համալսարանի գործընկեր բարերարների կողմից տրամադրած միջոցների հաշվին:

Երկրորդը, ավելի ցածր ուսման վարձի սահմանումն է կարիքավոր ուսանողների համար: Համալսարանի կազմում գործող հատուկ հանձնաժողովը ուսումնասիրում է ֆինանսական աջակցության համար ներկայացված հայտերը եւ դասակարգում դրանք՝ ըստ կարիքի աստիճանի: Հայտերը անանուն են ներկայացվում ուսումնասիրության: Կարիքի մակարդակը որոշելիս հանձնաժողովն օգտվում է հայտերում ներկայացված տվյալներից եւ հայտատուների տներ այցելության ժամանակ կատարած արձանագրություններից: Օժանդակության չափը կարող է տատանվել ուսման վարձի 25 - 90 տոկոսի միջակայքում:

Երրորդը ուսման վարձի տարժամկետ վճարման մեխանիզմն է, որն ուսանողին հնարավորություն է տալիս այսօր ստանալ որակյալ կրթություն, ավարտելուց կարճ ժամանակ անց գտնել լավ վճարվող աշխատանք ու երկու տարվա ընթացում մարել կուտակած պարտքը:

Այսպիսով, ուսանողների ավելի քան 50 տոկոսը օգտվում է համալսարանի տրամադրած ուսման վարձի ֆինանսական աջակցության ծրագրերից: Ընդ որում, անհրաժեշտ է շեշտել, որ ընդունելության որոշումները բացարձակապես անկախ են ֆինանսական աջակցության որոշումներից: Ուսանողն ընդունվում է համալսարան իր գիտելիքի շնորհիվ, իսկ համալսարանը երաշխավորում է, որ որեւէ շնորհալի ուսանող ֆինանսական պատճառներից դրդված հարկադրված չլինի դադարեցնել ուսումն համալսրանում, ինչին էլ միտված են վերը նշված երեք լուծումները:

Անվանական կրթաթոշակներից օտվելու համար ուսանողը պետք է բավարարի հետեւյալ պայմաններին ու չափանիշներին. ա) ունենա բացառիկ առաջադիմություն, բ) լինի իր խմբի մեջ լավագույնների շարքում:

Կարիքավորների համար նախատեսված օժանդակությունից օգտվելու համար ուսանողը պետք է ներկայացնի հայտ, ամենայն թափանցիկությամբ տրամադրի ընտանիքի ֆինանսական կացության մասին տվյալներ եւ փաստի իր ընտանիքի կարիքավորությունը:

Շուտով համալսարանը կազդարարի նաեւ օտարերկրյա քաղաքացիների համար նախատեսված անվանական կրթաթոշակների հատկացման մեկնարկը: Մինչ օրս, բարձր առաջադիմությամբ պայմանավորված անվանական կրթաթոշակներից օգտվելու հնարավորություն ունեին միայն Հայաստանի քաղաքացիները եւ երկարաժամկետ կեցության կարգավիճակ ունեցողները: Մոտ ապագայում նախատեսվում է սահմանափակ թվով անվանական կրթաթոշակներ սահմանել նաեւ բացառիկ առաջադիմություն ունեցող օտարերկրյա քաղաքացիների համար: Օտարերկրյա ուսանողների թվի աճը առաջին հերթին կնպաստի տեղացի ուսանողների մտահորիզոնի ընդլայնմանն ու կնպաստի ուսումնառության փորձառության հարստացմանը:

*սեփ.լր.*